Արքոս՝ որ գործէ զձորն Ոստանայ, ունելով 'ի ստորոտան զՀաղար Աստուածածին վանս, ուր փոխադրեալ հանգուցեալ կան նշխարք սքանչելոյն և գեղեցկաբան սուրբ վարդապետին Եղիշեայ Թարգմանչի։ Ի մտից Նորա 'ի հարաւագոյն ծայր արևելից ծովուն կայ ՈՍՏԱՆ աւան, մայրաքաղաք Ռշտունեաց, յորում Գագիկ արքայ շինեաց արքունիս և տաճարս ամբանոցս սքանչելիս, որք առհասարակ քակեալք և աւերեալք են, բերդն միայն կանգուն կայ Նորոգեալ 'ի յետնոց, և տունք սակաւք 'ի ստորև։ — Յարևմտից Ոստանայ կայ Քաղաքաւք կամ Մանաւէրդ առ ծովեզերքն 'ի սարաւանդի կարկառելոյ 'ի ծով, յոր գահավիժեաց Մանաճիհրն Ռշտունի 'ի բարձանց զարքաւագունս Ս. Յակովբայ։ — Ի սորա արևմտից նշանաւոր տեղիք զծովեզերքն են Իւս գեօղ, յորում աւերակ Քառասուն Խորան մենաստանի մեծի շինելոյ 'ի Գագկայ. որ և 'ի Թիկանց Նորին շինեաց այլ մենաստան Ս. Սիոն անուն, յամարանոց բազմաժողով միաբանիցն։ — Փշատենս, Տլաղ և Նաբէ, կիսաժամաւ հեռի է 'ի սմանէ առ ծովեզերքն Ճգնարան Գրիգորի Նարեկացւոյ երկնակրօն սրբոյ, քարայրք երկու և մատուռն մի. իսկ 'ի գեղջն կայ անուանի մենաստանն ուր կրօնաւորեցաւն և գրեաց զՀրաշագիւս մատեան Աղօթիցն. անդ Թաղեալ են արենակիցք սրբոյն, և նշխարք սրբոյ օրիորդին Սանդխտոյ։ — Մուխրաբերդ գիւղ, այսպէս կոչեցեալ վասն աստի հոսելոյ 'ի ծով Ս. Սահակայ Ռշտունեաց եպիսկոպոսի զհուր և զմոխիր ատրուշանին Պարսից։ — Կարմրաձոր Աստուածածին, փառահեղ եկեղեցեաւ, 'ի Գագկայ շինեալ, որոյ և աղօթատեղի վանդակապատ կայ 'ի վերոյ գրանն, և կոչի այսպէս վասն Կարմիր ականն եդելոյ 'ի վերայ նշանագործ խաչափայտին՝ որ աստ պահի։ Մերձ է նմին Լուսապատող Ս. Սահակ վանք, և յետին նորա Ս. Թովմաս առաքեալ, որոյ և մասն նշխարաց ծածկի յուխտս։ — Առ սոքաք 'ի միջավայր հարաւային կողման ծովուն ամբարձեալ և ընդկողեալ է 'ի նոյն Ընչաքաղաք կամ Կապուտկող լեառն բարձր, յորոյ գագաթանէ գիտելով Ս. Յակովբայ անէծ զերկիրն Ռշտունեաց. և 'ի կողս լերինն կայ վանք խրթնի յիւր անուն Ս. Յակոբ։ — Բելս գեօղ 'ի հարաւոյ սորա, զոր ասեն կոչեալ վասն Թաղմանն 'ի սմա Բելայ Նեստահարելոյ 'ի Հայկայ։ — Յարևմտակողմանս հարաւոյ ծովուն՝ Սուքի գիւղ և Ս. Կարապետ վանք 'ի լերին. Խարդիր, ուր պատուի վէմ մի վասն սքանչելեաց ինչ Ս. Նարեկացւոյն։ — Թանա 'ի ծայր արևմտից հարաւոյ ծովուն՝ առ համանուն գեղով որ Կիւղնէրբէ կոչի այժմ, ունի կամուրջ քարաշէն. և 'ի մերձակայ լերինն զվանս Ս. Յիսուսիանոսի՝ վայելուչ եկեղեցեաւ և գեղահայեաց։ Այս Թուխ կամ Թաղ կամ Խաղ կամ Խաղ կոչի՝ Աղձնեաց Նահանգին էր վիճակ 'ի հնումն, ուրանօր դադարեցին առ վայր մի Հռիփսիմեանք. և աստ առ ջրամբն Սմբատ արքայ Ա. հարաւ ընդ զօրս Ահմատայ բռնաւորի յամին 896։

96. Ի հարաւոյ Գաւաշայ և Ոստանայ կայ հին աշխարհն Մոկաց, որ սակաւածանօթ է, սակս անվարուն լերանցն ափափայից և Քրդաց բռնակալութեան. 'ի բաղում վիճակս արոհեալ է, որոց գլխաւոր և առաջին և Վանայ կուսակալութեանն գրաւեալ՝ ՄՈԿՍ զոր Մէյ կամ Մուս կոչեն այժմ, 'ի 'ի հարաւոյ Քարադաշի և 'ի մտից Առնոս լերին, իբր 60 գիւղորայիւք, յորոց շատք հայաբնակք են, և գլխաւոր է քաղաքաւանն ՄՈԿՍ 'ի գժուարակոխ քարաբերին իբր 2000 բնակչաք, տունք ցրուեալ են 'ի կոհակս քարաբերին, և առ դեռուն՝ որ անկանի 'ի Պուրդան ինքեալ 'ի լերանց 'ի հիւսիսոյ արևելից. բնակիչք Մոկայ ոստայնանկք են և ներկարարք, և այն են արդասիք Ճարտարութեան նոցա և վաճառք, ընդ որս և մեղր և մոմ։ — Մերձ 'ի Մոկս յարևելից կուսէ կայ Աղաբանի գիւղ և վանք հռչակեալ յանուն Ս. Խաչի, զոր 'ի ժ. դարու շինեաց Սահեփանոս եպիսկոպոս Մոկաց, հանգուցեալ 'ի նմին մասն 'ի կենարար փայտին զոր եբեր 'ի Կոստանդնուպոլսոյ, հանգերձ բազում նշխարաք սրբոց, և Գրիգոր Նարեկացի գրեաց գովասանդ վիպասանութեամբ ըղպատմութիւն շինութեան տեղւոյն և ներբող 'ի նոյն և 'ի խաչն սուրբ։ ՅԱղաբանից էր և Սիմէոն վարդապետ բանաստեղծ 'ի ԺԱ դարու, որ տաղաչափեաց զվիպասանութիւն Պահլաւունեաց և Մամիկոնենից։

Յելից Մոկաց կայ ՀԱՅՏԱԽ վիճակ համանուն քաղաքաւանաւ բնակեալ 'ի Ճարտարաց Հայոց ոստայնանկաց, և 'ի Քրդաց սակաւուց որք Շուխ կամ Տուխ կոչեն զտեղին, նշանակ ՋԵՐՄԱՁՈՐ գաւառի Մոկաց, ուր և Լիս (Կլիս) ասէ լինել Թովմաս Արծրունի, այսինքն է կապան կամ անձուկ անցք լերանց. կայ առ գետակի օժանդակի Տիգրիսի, յորոյ աջմէ բերդն է տապաստանարան բռնաւորացն Պեռերիանայ և Նուրուլլահայ։ Ի լերանց Շատախայ բղխեն արևելեան ակունք մեծի գետոյն Տիգրիսի։ Յերկրէ ատաի ընծայեցան կաթողիկոսք ոմանք Աղթամարայ, որպէս և Յովհաննէս նախորդ տեառն Խաչատրոյ վախճանելոյ 'ի 1851, էր 'ի գեղջէ Ծղայ։ — Յարևելից հարաւոյ Շատախայ կայ ՆՈՐՏԸԶ կամ ՆՕՏԸԶ վիճակ բնակեալ 'ի Հայոց և 'ի Քրդաց։ — Իսկ յարևմտից հարաւոյ Մոկաց ցսահմանս Բաղիշու և Քրդաստանի վիճակք են ԿԱՐԿԱՌ, ՊՕՀԴԱՆ, ԿԵՑՍՆ և ԻՍՊԵՐԴ կամ ՍՊԱՐԿԵՐՏ, յորոյ Լուսոր գեղջէ էր Նիկողայոս կաթողիկոս Աղթամարայ, ուսումնասէր այր, 'ի կէս ԺԸ դարու։

Ը. ՔԻՐՏԻՍՏԱՆ ԵՒ ՀԷՔԵԱՐԻ

97. Բնիկն Քիւրտիստան կայ 'ի հարաւոյ Մոկաց և գաւառին Վանայ, յարևելից ունի զՊարսից սահմանն, յարևմտից զԱղձնիս և զՏիգրիս ցկողմանս Մօսլայ, 'ի հարաւոյ զՓոքր Զապ գետ. հիւսիսակողմն և արևմտակողմն երկրիս 'ի բուն 'ի Մեծ Հայս է, աշխարհն ԿՈՐԴՈՒՔՑ, յորմէ և ՔԻՐՏԻՍՏԱՆ կոչեցաւ. և է ըստ անուանն կորդ երկիր բարձր բարձր և աղնաղնեալ լերանց կոհակք, զորս ազատաբարոյ ազգն Քրդաց ունին 'ի վաղ ժամանակաց, ընդ որս և Հայք բնիկք, և Քաղդէացիք քրդաբարոյք 'ի բարձրադոյն կողմանս երկրին բնակեն 'ի բաղում դարուց հետէ. որպէս և նախահարք նոցա Քաղդէացիքն առաջինք